այն։ Ոչինչ փոյթ էր նորա զալ ռամկաց, զի նայ ի զիշերի խոստացեալ էր տալ. փորձէր թէ կամեցողք կա՞ն բանիս։ Եւ ասէր. Տեսանեմ զի լաւ տեսցես զժողովուրդ քո, և ո՛վ ոք հակառակի՝ ծանուսցես ինձ։ Եւ ի նոյն կէտի եթէ գտանէր զոք հակառակիչ, թրով ոչ խնայէր և ոչ յազինս նոցա, զի ատելի յոյժ լեալ էաք նորա, և ունէր ոխ ծածկեալ մինչև յաւուրս յայս որ Մայիսի Իե յաւուր Դշի յետ աւուրց երից Պէնտակոստէի Սուրբ Հոգոյ գալստեան տօնի։ Եւ զայս լուեալ խօճայիցն և չէլէպոցն՝ ամենայն մեքենայք նոցին խորտակեցան և ի նստեալ տեղիսն ապուշ մնացին որք բազմախորհրդեան կային։ Եւ ոկսաւ Եղիազար վարդապետն ի ժամ ատենի զնոսա խայտառակել ի դաս և ի քարոզ իւր ռամկաց քաղաքին թէ Մարդասպան եղեն արքն այնոքիկ և զմեզ կամէին խաբբալել և պահանջէին յերուսաղէմայ ևս զդրամ արեան, վասն որոյ և նզովեալք են։ Զայս առնէր յամենայն եկեղեցի ի լուր ռամկաց անարգել և անդանդաղ, և հոգայր ևս վասն Երուսաղէմի գործոյն, զի բացաւ ևս դուռ վէզիրին ընդ դէմ նմա և ծանօթանայր քեհեային և տայր ընծայս նմա և վէզիրին և ոչ խնդրէր կամ խօսել կարէր բան ինչ։ Բայց ամբաստանեաց զՈՒՀԻՃԱՆԷՆ առ վէզիրն. և թէպէտ քէհեան կամեցաւ ընդ Եղիազարին, սակայն վէզիրն սիրէր զնա, ոչ լուաւ նմա, այլ ասաց. Գնա՛ և հաշտիր ընդ նմա խաղաղութեամբ։ Այս եղև յՈՒսկիւտար ի Լուսաւորչի պահոց, յորում և մեք ևս և Աստուածատուր վարդապետն անցաք ի գանկատ յՈՒՀԻՃԱՆԷ ըստ կամաց Եղիազարի։ Որ յետ պայրամի նոցին գնաց յՈՒսկիւտարն վէզիրն, ընդ նմա և թագաւորն՝ երթալ ի պատերազմ. և եդ զայմախամ զԻսմայիլ փաշան։ Եւ անտի եկեալ առ զայմախամս, և նա յետ աւուրց ասաց՝ Եկէ՛ք։ Վասն որոյ եւ արք